ԴՎԻՆԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍԻ 1971—1973 ԹԹ. ՊԵՂՈՒՄՆԵՐԸ

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

Դվինի կենտրոնական թաղամասը տեղադրված է քաղաքի միջնաբերդի արևմտյան կողմում։ Թաղամասը սկսել է ձևավորվել դեռևս IV դ. վերջերին, երբ կառուցվել են եռանավ մեծ եկեղեցին (հետագայում կաթողիկե) և այլ պաշտամունքային ու աշխարհիկ շինություններ։ Հնագիտական պեղումների ընթացքում (սկսած 1937 թ.) այդ թաղամասից գտնվել են բազմաթիվ նյութեր, որոնք նշանակալից դեր են կատարել քաղաքի վաղ միջնադարյան շրջանի տնտեսության, պատմության, ճարտարապետության ուսումնասիրության համար[1]։ Այդ տեսակետից պակաս կարևոր չեն վերջին 3 տարիներին կենտրոնական թաղամասում հայտնաբերված նյութական մշակույթի մնացորդները և ճարտարապետական կառուցվածքները։

1971—1973 թթ. աշխատանքները հիմնականում կենտրոնացված էին նախկինում արդեն բացված VIII—IX դդ. աշխարհիկ շինության հարավային մասում՝ կաթողիկե Եկեղեցուց հարավ-արևմուտք[2]։ Պեղավայրը ընդգրկում էր շուրջ 500 քառ. մ տարածություն։ 1973 թ. ոչ լրիվ պեղվեց նաև կաթողիկե եկեղեցուց հյուսիս՝ միանավ բազիլիկ տաճարի և կաթողիկոսական պալատի միջև ընկած նեղ հատվածը, որտեղից հայտնաբերված նյութերը բավական հետաքրքիր են Դվինի մ. թ. ա. IX—VII դդ. և անտիկ շրջանի նյութական մշակույթի ուսումնասիրության առումով (մ. թ. ա. III— մ. թ. I դդ.)։

Կենտրոնական թաղամասի վաղ շրջանի շերտերի քննությունը դուրս է մեր հետաքրքրության ոլորտից։ Միայն նշենք, որ 1973 թ. պեղված խրամատի (որը խորանում էր VII դ. շերտի մակարդակից) կտրվածքում հստակ որվագծվում էր նախորդ դարաշրջանների շերտագրական պատկերը։ Կաթողիկոսական պալատի հատակից մոտ 0,5 մ խորության վրա նկատվում է բավական հաստ մի շերտ-հարթակ, որն առաջացել է սպիտակ ավազաքարի տաշվածքի մնացորդներից։ Կասկածից վեր է, որ այդ շերտը երևան է եկել եռա-

---

1 Վ. Հարությունյան, Դվինի V—VII դդ. ճարտարապետական հուշարձանները, Երևան, 1950, Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, 1952, Б. А. Шелковников, Керамика и стекло из раскопок гор. Двина («Труды Государственного исторического музея Армении», IV, Ереван, 1952), Բ. Ն. Առաքելյան, Քաղաքները և արհեստները Հայաստանում 9—13-րդ դդ., հ. 1, Երևան, 1958, Հ. Մ. Ջանփոլադյան, Դվինի միջնադարյան ապակին IX—XIII դդ., Երևան, 1974։

2 Կենտրոնական թաղամասի 1964—1970 թթ. պեղումների վերաբերյալ տե՛ս А. А. Калантарян, Раскопки центрального квартала Двина (1964—1965 гг.) («Պատմա-բանասիրական հանդես» (այսուհետև՝ ՊԲՀ, 1967, № 1), նույնի, Դվինի կենտրոնական թաղամասի մետաղե իրերը (ՀՍՍՀ ԳԱ «Լրաբեր», 1971, № 6), Р. М. Джанполадян, Новые данные о стеклоделии Двина («Краткие сообщения Института археологии АН СССР», № 120).

նավ բազիլիկ տաճարի քարաշեն շինության կառուցման շրջանում, IV դ. վերջում։ Թեև այստեղ ցայտուն նշրագծվում էր վաղ միջնադարի վերին սահմանը, բայց հատվածի փոքրությունը հնարավորություն չընձեռեց ավելի խոր քննության։ Ուշագրավ է, որ անմիջապես այդ շերտի տակ բացվեց անտիկ շերտը և հայտնաբերվեցին մ. թ. ա. III—I դդ. գունազարդ խեցեղենի հիանալի նմուշներ։ Հետևաբար, պատահական չէ, որ նույն հատվածում, գրեթե նույն խորությունից, հայտնի են այդ ժամանակաշրջանին բնորոշ նյութերով կարասային թաղումներ[3]։

Անտիկ շերտից անմիջապես հետո բացվեց մի մշակույթ, որը Դվինում հայտնի է իր առանձնահատկություններով։ Դա մ. թ. ա. IX—VII դդ. շերտն է, որտեղից հայտնաբերվել են սև, փայլեցված խեցեղեն, ինքնատիպ հարդարանքով պաշտամունքային անոթներ, վերադիր զարդերով կարասներ և կենդանիների գլուխներով ոճավորված զարդարուն տախտակներ, որոնք, հավանաբար, եղել են մեհյանների ատրուշաններ։ Կենտրոնական թաղամասում 1973 թ. բացվեց պատկերազարդ մի այլ կավե տախտակ հենց իր տեղում։

Ելնելով հնագիտական հարուստ նյութերի տվյալներից և շինարարական մնացորդներից, պեղվող հատվածում միջնադարյան շերտերը հստակ տարբերվում են միմյանցից և ըստ դարաշրջանների ներկայացնում են շերտագրական հետևյալ պատկերը. 1) X—XIII դդ., 2) IX—X դդ., 3) VII—VIII դդ., 4) V—VI դդ.։

Կենտրոնական թաղամասի X—XIII դդ. շերտերը խիստ տուժել են ուշ շրջանի թաղումներից։ Եթե 893 թ. երկրաշարժից հետո կաթողիկե եկեղեցու շուրջը քիչ է կառուցապատվել, ապա նրանից մի փոքր հեռու քաղաքն ապրել է շինարարական իր սովորական կյանքով։ 1970 թ. եկեղեցուց հարավ-արևմուտք բացվեցին արևմուտքից-արևելք ձգվող հաստահեղույս պարսպի մնացորդներ՝ հավանաբար, կառուցված X դ. սկզբներին, քանի որ նրա մեջ կային փուլ եկած եկեղեցու կրաշաղախի մնացորդներ։ Ցավոք, պարիսպը քանդվել է առանց հետազոտվելու։ 1970—1972 թթ. ուսումնասիրությունների ժամանակ ամենավերին շերտերում նկատվեցին հում աղյուսով շարված շինությունների պատեր, որոնք անմիջապես հենվում էին պարսպին։ Տեղ-տեղ նույնիսկ նկատվում էր մուտքերի հետքեր։ Այս շերտը, որի խորությունը հասնում է 1—1,2 մ, խիստ սակավաթիվ նյութեր է տալիս, և դրանք իրենց ձևերով Դվինի միջնաբերդի նույնատիպ առարկաների կրկնությունն են։

1973 թ. նույն հատվածի —d—17 քառակուսում, 0,7 մ խորության վրա, բացվեց թոնիր և հոր ունեցող մի փոքր շինություն։ Հորերի այս ձևը, որոնց վերին մասերը շարված են թրծած աղյուսներով, բնորոշ է կենտրոնական թաղամասի ուշ շերտերին և հանդիպում են շատ հաճախ։ Դրանք, հավանաբար, օգտագործվել են ջրահեռացման նպատակով, քանի որ շատ խորն են և հնագիտական նյութեր գրեթե չեն պարունակում։

Պեղվող հատվածի X—XIII դդ. շերտերում հայտնաբերված սակավաթիվ առարկաները խիստ բնորոշ են այդ ժամանակաշրջանի նյութական մշակույթին։ Դրանց մեջ ուրույն տեղ են գրավում մուգ կանաչ միագույն ջնարակով, փորագիր վարդյակներով թասերը, կապտավուն ապակուց հարթ ապարան-

3 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 59, նկ. 57 և 58։

ջանները, հորիզոնական, կլոր կանթերով հասարակ կճուճները (ամբողջական և բեկորներով), խուփերի բեկորները, երկանքի վրայի քարի շատ ինքնատիպ օրինակը։ Հատկապես աչքի են ընկնում նուրբ պատերով ապակե փոքր սրրվակների առանձին բեկորները, որոնցից մեկի հատակին դրոշմված է սիրամարգի հիանալի պատկեր։ Հայտնաբերված նյութերն իրենց բազմաթիվ զուգահեռներն ունեն ինչպես Դվինի, այնպես էլ Հայաստանի այլ վայրերի ու նրան հարևան երկրների հուշարձաններում։

Դվինի և ոչ մի պեղավայրում IX դ. շերտն այնպես հստակ չի սահմանազատվում, ինչպես կենտրոնական թաղամասում։ 893 թ. երկրաշարժն, ավերածությունններով հանդերձ, մեզ տալիս է այդ շերտի վերին սահմանը։ Այդ շրջանից մեզ են հասել կառույցների քարե հիմնապատերի առանձին բեկորներ, ինչպես նաև արհեստագործական արտադրանքի նմուշներ։ Հիշյալ հատվածի IX դ., տեղ-տեղ նաև VIII դ. շերտերի խորությունը տատանվում է 1,3—2 մ սահմաններում, որը ցայտուն երևում է պեղավայրի ուղղահայաց կտրվածքներում։ Վերջիններս անմիջապես նստած են կաթողիկե եկեղեցու VII դ. սկզբների վերակառուցման ժամանակ առաջացած տուֆի տաշվածքի շինարարական թափոնների վրա։

IX դ. ճարտարապետական կառույցները շատ վատ են պահպանվել, և դրանց հատակագծային լուծումների վերաբերյալ հնարավոր չէ ընդհանուր պատկերացում կազմել։ Հնագիտական հարուստ նյութերի առկայությունը հնարավորություն է ընձեռում մանրամասն քննել IX դ. մշակույթի և արհեստային արտադրանքի հետ կապված բազմակողմանի հարցեր։ Խիստ հարուստ է այստեղից հայտնաբերված հասարակ, անջնարակ խեցեղենի ժողովածուն (աղ. I)։ Երևան եկան ծանծաղ, պսակները ալիքաձև, երբեմն պսակների տակ դրսից շուրջանակի ձգված խոր ակոսով փոքր թասերի նոր տեսակներ, որոնք մինչ այդ չեն հանդիպել Դվինի IX դ. նյութերում։ Դվինի խեցեղենի արտադրության համար նոր երևույթ են կաղապարների մեջ պատրաստված, դրոշմազարդ անոթները, որոնց պատրաստման և հարդարման եղանակը լայնորեն տարածված էր Միջին Ասիայում և Մերձավոր արևելքում։ Հայաստանում դրանք առաջին անգամ հանդիպում են IX դ. նյութերում։

Նմանօրինակ անոթներ գտնվել են նաև Դվինի միջնաբերդում, որոնք, սակայն, վերաբերում են ավելի ուշ շրջանի։ Վերջիններիս հարդարանքում դգալի են արևելյան մահմեդական արվեստին բնորոշ արաբատառ զարդերը։ Կենտրոնական թաղամասում գտնված դեղնավուն սափորների նշի ուռուցիկ դարդերով և ծաղկազարդերով բեկորները, անշուշտ, կաղապարով դրոշմված խեցեղենի լավագույն նմուշներ են։

Նորահայտ ձևերի մեջ հետաքրքրական են շեփորաձև վզով և պսակով շատ նուրբ մշակված սափորների բեկորները, ինչպես նաև պսակների վրա լայն ակոսներ ունեցող դեղնավուն կճուճները։ Ուշագրավ է, որ վերջիններս, ինչպես ցույց են տալիս շերտերում գտնված նյութերը, VII—VIII դդ. այդօրինակ կճուճների պատրաստման լավագույն ավանդների հարատևելու արդյունք են։ Մեծ թիվ են կազմում IX դ. այն անոթները, որոնք հայտնի են կենտրոնական թաղամասի նախորդ տարիների պեղումներից։ Դրանք են՝ քթիկավոր ճրագները, ծորակով անոթները, կտրվածքում բազմաստիճան պսակ ունեցող դեղնավուն կճուճները և, վերջապես, հորիզոնական ունկերով կճուճները, որոնց բարձրությունների և բերանի տրամագծերի չափերը համապատասխանում են

միմյանց (որը բնորոշ է IX դ. խեցեղենին)։ Սակավ են ջնարակած անոթները։ Որոշակի քանակ են կազմում կաթնավուն, կապարի խուլ ջնարակով անոթների բեկորները, որոնք, անշուշտ, մերձավորարևելյան ծագում ունեն։ Կան նաև եռագույն, դարչնագույն սլաքաձարզերով թասերի և քրեղանների բեկորներ, միագույն կանաչ անոթներ, որոնք թվագրվում են IX դարով։ Բազմաթիվ նմանօրինակ բեկորներ հայտնի են Դվինի նախորդ տարիների պեղումներից և անգրկովկասյան ժամանակամերձ այլ հուշարձաններից[4]։

Կենտրոնական թաղամասի վերջին տասը տարիների պեղումներից հայտնաբերված նյութերը հնարավորություն ընձեռեցին մեկընդմիշտ լուծելու Դվինում IX դ. ապակեգործության, ապակու բազմազան արտադրության առկայության հարցը։ 1971—1973 թթ. նյութերի մեջ մեծ թիվ են կազմում կանելյուրազարդ ապակե փոքր թասերը, տարբեր երանգներով, բջջավոր և հարթ պատերով ապակե բաժակ-գավաթները, ղամպարները, կլոր պատերով, լայն փռված թասերը, որոնց ապակիները շատ վճիտ են (աղ. II)։ Դվինի IX դ. ապակեգործությանը բնորոշ են երկրաչափական, բուսական զարդերով, ինչպես նաև արաբատառ գրերի ընդօրինակությամբ նկարուն ապակիները։ 1973 թ. գտնվեց դարչնագույն և կարմրավուն նկարազարդով այդպիսի բաժակի մի հիանալի բեկոր։

Ուշագրավ է խճանկար ապակե թասի բեկորի գյուտը IX դ. հորում։ Ինչպես հայտնի է, այդ ապակիների պատրաստման անտիկ, բավական բարդ տեխնիկան ինչ-որ չափով գոյատևել է նաև հետագայում։ Նման թասեր հայտնի են Մերձավոր Արևելքում[5]։ Խճանկար թասի մի օրինակ (ներմուծված) գտնվել է նաև Դվինի միջնաբերդում[6]։ Միջնադարյան շերտերից խճանկար ապակիները, հատկապես դրանց թվագրության առումով, ավելի խոր քննություն են պահանջում։

Զգալի թիվ են կազմում մետաղե առարկաները, որոնք հիմնականում բաժանվում են 3 խմբի. զենքեր, զարդեր և դրամներ։ Զենքերը երկաթից են, գերազանցապես քառակող պոչուկավոր նետասլաքներ, ետ ծալված ծայրով միասայր դաշույններ։ Կա նաև կոթունի մնացորդներով մի տեգ։ Զարդերի մեծ մասը պղնձից են՝ մատանիներ, օղեր, շքասեղներ և այլն։ Դրամները պղնձյա են, Դվինում բավական տարածված և շատ վատ պահպանված։ Դրանք VIII—IX դդ. թվագրվող արաբական դրամներ են, որոնց առկայությունը շերտում վերստին հաստատում է առաջարկվող թվագրությունը։ Եթե նախորդ տարիներին, Դվինի կենտրոնական թաղամասում, վաղ միջնադարյան շերտը թվագրվում էր V—VIII դդ. ընդգրկող մի ամբողջ ժամանակահատվածով, ապա վերջին շրջանի պեղումները հնարավորություն են ընձեռում այդ նույն հատվածում անջատել տարբեր հորիզոններ։ Դա VII—VIII դդ. շերտի առկայու-

---

[4] Б. А. Шелковников, Художественная керамика Двинских раскопок (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1940, № 4—5), Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 209—210, նկ. 187, 189, Ա. Ա. Քալանթարյան, Դվինի IX դ. ջնարակած խեցեղենի հարցի շուրջ, (ՊԲՀ, 1971, № 1), А. Л. Якобсон, Художественная керамика Байлакана («Материалы и исследования по археологии СССР»), М.—Л., 1959, № 67.

[5] C. J. Lamm, Oriental Glass, Stockholm, 1941, աղ. XIIIa, Smith, Glass from the Ancient World, New-York, 1956, 484.

[6] Հ. Մ. Ջանփոլադյան, Դվինի միջնադարյան ապակին, էջ 58, նկ. 10։

թյունն է, որը բավական ցայտուն դիտվում է պեղավայրի մի շարք հատվածներում։

Ի՞նչ կռվաններ կան այդ շերտը թվագրելու համար։ Գետնի մակերևույթից 1,6 մ, իսկ տեղ-տեղ 2,0—2,1 մ խորության վրա (տատանումները կապված են ռելիեֆի հետ), անմիջապես IX դ. շերտի տակ բացվում է մոտ 40—50 սմ հաստությամբ կարմիր և սև տուֆի տաշվածքի բեկորներից առաջացած մի հարթակ (նկ. 1)։ Ավելին, այդ հարթակի վրա որոշ հատվածներում նկատվում են խիստ ավերված շինությունների հիմնապատեր, որոնք օրգանական ոչ մի կապ չունեն IX դ. շինությունների հետ։ Դա կարելի է բացատրել հետևյալ կերպ. VII դ. սկզբներին Դվինի կաթողիկե եկեղեցին հիմնովին վերակառուցվել է, որի ժամանակ փոփոխվել է ոչ միայն կառուցվածքի հատակագիծը, այլև շինաքարը՝ սպիտակ ավազաքարին փոխարինել է տուֆը, որի բեկորներից գոյացած հարթակը ցույց է տալիս, որ եկեղեցու հարավային և հարավարևմտյան մասերը եղել են շինարարական հրապարակ։ Կառույցի ավարտից հետո հրապարակը հարթեցվել է, խառնվել է նաև շինարարական աղբը, որն առաջացել էր եկեղեցու փլատակները մաքրելիս։ Այդ են ապացուցում խճի շերտում գտնված սպիտակ ավազաքարից, քանդակազարդ և պրոֆիլավորված քարերի բազմաթիվ բեկորները և խճանկար հատակի մի հատվածը, որոնք պատկանել են նկեղեցու նախորդ շինության հարդարանքին։

Դվինի կաթողիկե եկեղեցու կառուցման ժամանակ քարերի տաշվածքից առաջացած հարթակները շերտագրության մեջ շտկումներ մտցնելու լավ հնարավորություն են ստեղծում։ 1965—1967 թթ. պեղումների ժամանակ, եկեղեցուց արևմուտք ընկած հատվածում մեզ հաջողվեց նկատել եկեղեցու IV—V դդ. կառուցման շրջանում առաջացած սպիտակ ավազաքարի կտորների հարթակներ։ Նույնը, ինչպես նշեցինք, պարզ նշմարվում էր նաև 1973 թ. պեղումների ժամանակ, հատակից մոտ 0,5 մ խորության վրա, կաթողիկոսարանի և միանավ բազիլիկ տաճարի մոտակայքում։

VII դ. սկզբի շերտի սահմանի այս ցայտուն հաստատումը խիստ կարևոր է V—VI դդ. շերտագրությունը պարզելու և դրա հետ կապված այդ շրջանի մշակույթի վերաբերյալ մի շարք դիտողություններ անելու տեսակետից։ Ցավոք, այդ շերտում նյութական մշակույթի մնացորդները քիչ են։ Գտնվել են երկու երկաթե նետասլաք, մեկը՝ եռաթև, մյուսը՝ քառակող և շեշտված պսակներով սափորների բեկորներ, որոնք, կարծեք, անցման օղակ են նախորդ շրջանի և IX դ. սափորների ձևերի միջև։ Գտնվել է նաև շատ ինքնատիպ ձեռքի զուրգի սկավառակի բեկոր (աղ. III, 2)։

1971 թ. c—20 քառակուսում, հորը պեղելու ժամանակ, 3 մ խորության վրա բացվեց սպիտակ ավազաքարե կանոնավոր պատի մի հատված, որը ձգվում էր արևմուտքից-արևելք (հյուսիս շեղումով)։ 1972 թ. պատի մյուս երեսը մաքրելու ժամանակ, նույն խորության վրա, պատից 1,4 մ հեռավորությամբ բացվեց կավե պնդացած հատակի վրա ամուր նստած փայտե սյան մի մեծածավալ խարիսխ։ Պարզ էր, որ այստեղ բացվում էին հսկա շինության հետքեր, ուր, ամենայն հավանականությամբ, պետք է լիներ սյունազարդ դահլիճ։ Պեղավայրում հստակ պատկեր ստեղծելու համար, 1972—1973 թթ. այդ հատվածում միաժամանակ պեղվեց շուրջ 350 քառ. մ տարածություն, որի վերին շերտերի և նրանց թվագրության վերաբերյալ արդեն խոսվեց։ Այդ տարածության վրա, անմիջապես VII դ. շերտի տակ, բացվեց մոխրի շերտի մեջ



Նկ. 1

Նկ. 2

թաղված շենքի արևմտյան հատված (նկ. 2), որի ամբողջացումը կստեղծի վաղ ֆեոդալական ժամանակաշրջանի աշխարհիկ շինության հետաքրքիր և եզակի նմուշ։



Նկ. 3

Երեք տարիների ընթացքում պեղվել են շինության կենտրոնական սյունաշարդ դահլիճի և հյուսիսային ու հարավային թևերի սենյակների որոշ մասը։ Դահլիճում առայժմ բացվել են՝ հյուսիսային կողմի ծայր արևմտյան և հարավայինի արևմտյան երկու խարիսխները։ Դահլիճն ունեցել է կավապատ սվաղած ամուր հատակ, պատերը (լայնությունը՝ 1,5 մ) շարված են սպիտակ

ավազաքարով և հում աղյուսով, որոնք երկու կողմից շատ լավ սվաղված են և, հավանաբար, վերին մասերում ներկված են եղել։ Դահլիճի լայնությունը 12,4 մ է, երկարությունից առայժմ բացվել է մոտ 20,0 մ։ Խարիսխների կենտրոնից-կենտրոն եղած հեռավորությունը երկարությամբ՝ 8,5 մ, լայնությամբ՝ 8,40 մ է։ Ծայր խարիսխների կենտրոնները դահլիճի արևմտյան պատից 3,4 մ հեռավորության վրա են, իսկ երկայնական պատերից, հարավային մասում 1,87 մ, հյուսիսային մասում՝ 1,93 մ (նկ. 3)։ Առայժմ բացվել են երկու մուտքեր, փոքրը՝ արևմտյան պատի հարավային անկյունում, 0,87 մ լայնությամբ և մեծը՝ հյուսիսային պատի անկյունային խարիսխի դիմաց, որի լայնությունը, հետագայում փորված հորի հետևանքով, որոշել հնարավոր չէ։ Եթե ընդունենք, որ դահլիճի սյուների միջև եղած հեռավորությունները կայուն են, ապա նրա մոտավոր երկարությունը (4-ական սյան դեպքում) կհասնի առնվազն 30 մ։ Այս ենթադրությունը դուրկ չէ հավանականությունից, քանի որ այդ մեկնակետի մոտերքը, դեռևս նախորդ տարիներին բացված մի մեծ հորի կտրվածքում, հստակ դիտվում է սյունաշարդ դահլիճի հատակը։

Դահլիճի ծածկը, անկասկած, հենվել է հաստաբուն տուֆե սյուների վրա, որոնք տեղում չեն պահպանվել։ Հետևաբար, ծածկի մասին առայժմ ոչինչ ասել չենք կարող, միայն կարելի է հավաստել, որ նրա մեջ մեծ տեղ են գրավել եղեգը և կավը, որոնց մնացորդները նկատվել են։ Դահլիճի ներքին հարդարանքի մասին նույնպես տեղեկություններ չունենք։ Հարավային պատից ուղղահայաց ձգվում են բավական լավ տաշված, սպիտակ ավազաքարով շարված պատեր, որոնք, հավանաբար, պատկանում են այդ շինության սենյակներին։ Հարավային թևի հետագա պեղումներին խանգարում է գյուղամիջյան խճուղին։ Հյուսիսային մասում, դեռևս 1970—1971 թթ., բացվել են նույն քարերով շարված պատերի հետքեր, որոնք, անշուշտ, հյուսիսային թևի սենյակների մնացորդներն են։ Շինության ամբողջական պատկերն ստանալու համար անհրաժեշտ է պեղել բոլոր նշված հատվածները։ Անկասկած, ողջ շինությունը ոչնչացել է հրդեհից, որովհետև նրա հատակը ծածկված է մոտ 30—40 սմ հաստության մոխրաշերտով և այրված աղյուսների, փայտի մնացորդներով։ Հրդեհից հետո հոյակապ շինության հետագա վերականգնման մասին խոսք լինել չէր կարող։

Շինության շերտի V—VI դդ. թվագրությունը կասկած չի հարուցում։ Հիշյալ շերտից գտնված նյութերը առայժմ քիչ են, սակայն խիստ հետաքրքիր են և բնորոշ վաղ միջնադարյան մշակույթի համար։ Այստեղ, անմիջապես հատակին, գտնվեցին կլոր, փորագիր, տաշված բլթակներով եռաթև և ձվաձև կտրվածք ունեցող երկաթե պոչուկավոր նետասլաքներ, հաստապատ ապակե թասերի բեկորներ, կճուճների ակոսավոր շրթնամասեր (աղ. III, 6—9)։ Ուշագրավ են բաց կապտա-կանաչավուն ջնարակով սափորի բեկորները, ինչպես նաև լուսամուտի գունավոր հարթ ապակիների գյուտերը։

Արդ, ե՞րբ է կառուցվել այս շինությունը, ի՞նչ է այն իրենից ներկայացնում և երբ է հրդեհվել։

Այս մեծ պալատական շինության թվագրման և նրա նշանակության հարցերը անհրաժեշտ է դիտել շաղկապված։ Թվում է, որ պալատական շինության կառուցումը պետք է համընկնի հոգևոր կենտրոնը Դվին տեղափոխվելու հետ,

Աղյուսակ I

Աղյուսակ II



Աղյուսակ III

որը ուսումնասիրողների մեծ մասը համարում է 460—470-ական թվականները՝ Գյուտ կաթողիկոսի օրոք[7]։

Կառույցը V դ. թվագրելու օգտին են խոսում առաջին հերթին սյան մեծ խարիսխները և նրանց հարդարանքը։ Ներքնասալի չափերը տատանվում են 1,05—1,11 մ միջև, իսկ գլխասալի տրամագիծը վերին մասում՝ 82—89 սմ է։ Անկյուններում խարիսխները զարդարված են եռանկյունաձև ելուստներով, որոնք բնորոշ են միայն V դ. ճարտարապետությանը, քանի որ չեն հանդիպում VI—VII դդ., ինչպես նաև հետագա ժամանակաշրջանի հայկական և ոչ մի հուշարձանում։ Նույն խարիսխների կրկնօրինակները, գրեթե նույն չափերով, հանդիպում են Զվարթնոցում[8]։ Ենթադրվում է, որ դրանք պատկանում են հնագույն բազիլիկ կառուցվածքին։ Պրոֆ. Կ. Ղաֆադարյանը Զվարթնոցի այդ շինությունը և, բնականաբար, խարիսխները թվագրում է IV—V դդ.[9]։ Նման հարդարումներով խարիսխներ առայժմ հայտնի են Դվինում 7 հատ, Զվարթնոցում՝ 4 և մեկ հատ Եղվարդի հին գերեզմանատանը։

Այս պալատական շինությունը եղել է կաթողիկոսարանի նախնական շենքը. այդ մասին որոշ տեղեկություններ պահպանվել են Դրասխանակերտցու մոտ VI դ. կեսերի դեպքերի կապակցությամբ[10]։ Այս առումով խիստ հետաքրքիր է նաև Դվինի կաթողիկե եկեղեցու հյուսիսային մասում, դեռևս 1937—1939 թթ. բացված, տուֆակերտ, սյունազարդ դահլիճով պալատական մեծ շինության՝ կաթողիկոսարանի թվագրության հարցը։ Ուսումնասիրողների մի մասն ընդունում է, որ այն կառուցվել է V դարում[11], մյուս մասը՝ պալատական շենքի կառուցումը վերագրում է Սմբատ Բագրատունի մարզպանի շինարարական գործունեությանը՝ VII դ. սկզբներին[12]։

Այն կարծիքը, թե Դվինի կաթողիկոսարանը V դ. շինություն է, ներկայումս կարոտ է լուրջ վերանայման։ Վերջին տարիներին հայտնաբերված նյութերը հնարավորություն են տալիս շինությունը թվագրելու VII դարով։ Քննենք դրանցից մեկը։

1973 թ. կաթողիկոսարանի և միանավ բազիլիկ շինության միջև, կաթողիկոսարանի հյուսիսային թևի արևմտյան պատի անկյունում բացվեցին ուռուցիկ զարդագոտիով եղնաձև կարասներ, որոնք թվագրվում են IV—VI դդ.[13]։ Տեղում պահպանվել էր այդ կարասներից մեկի կավե հատ կափա-

---

7 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 115, Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 57։

8 Ս. Ե. Մնացականյան, Զվարթնոցը և նույնատիպ հուշարձանները, Երևան, 1971, էջ 242։

9 Կ. Գ. Ղաֆադարյան, Զվարթնոց (ՊԲՀ, 1959, № 4, էջ 189)։

10 «Յովհաննու Կաթողիկոսի Դրասխանակերտեցւոյ Պատմութիւն Հայոց», Թիֆլիս, 1912, էջ 59։

11 Կ. Գ. Ղաֆադարյան, Դվին քաղաքը և նրա պեղումները, էջ 118, Վ. Հարությունյան, նշվ. աշխ., էջ 57—58, О. Х. Халпахчьян, Гражданское зодчество Армении, М., 1971, стр. 93.

12 Н. М. Токарский, Архитектура Армении IV—XIV вв., Ереван, 1961, стр. 56—67, Ս. Ե. Մնացականյան, նշվ. աշխ., էջ 245, նույնի՝ Դվինի պալատի կառուցման ժամանակի մասին (ՊԲՀ, 1974, № 2, էջ 213—232)։

13 Գ. Տիրացյան, Հացավան ամրոցի 1962 թ. պեղումները (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1963, № 12)։

րիչը, որի բեկորներից մեկի վրա ուղղաձիգ երկաթագրով փորագրված է «Գրիգոր» (աղ. III, 4)։

Այս և նման փաստերից կարելի է եզրակացնել, որ կաթողիկոսական պալատը կառուցվել է VII դ., իսկ V դ. կաթողիկե եկեղեցու հյուսիսային մասում տեղադրված են եղել ինչ-որ տնտեսական շինություններ, որոնք հետագայում, միանավ եկեղեցին և կաթողիկոսարանը կառուցելու ժամանակ (VI—VII դդ.), քանդվել են։

1971—1973 թթ. պեղվող պալատական շինությունը հայկական միջնադարյան աշխարհիկ ճարտարապետության հետաքրքիր հուշարձաններից է։ Այն շուրջ հարյուրամյա գոյության ընթացքում պահպանել է իր դարաշրջանի կառուցողական, հատակագծային տարածական լուծման որոշակի առանձնահատկությունները, որոնք ավանդաբար անցնում են VII դ. նույնատիպ շինություններին, ինչպիսիք են Դվինի և Զվարթնոցի կաթողիկոսարանները, Արուճի պալատական հուշարձանախումբը և այլն։

Ե՞րբ կարող է կործանված լինել այդ շինությունը։ Միջնադարյան գրեթե բոլոր պատմիչները, սկսած Սեբեոսից, հետաքրքիր տեղեկություններ են հաղորդում VI դ. 60—70-ական թվականներին Հայաստանում տիրող խառն իրավիճակի մասին, հատկապես նշելով Վարդան Մամիկոնյանի (կրտսեր) ապստամբությունը պարսիկների դեմ[14]։ Պատմիչների վկայությամբ՝ պարսիկները Դվինում հրդեհել են եկեղեցին, իսկ ապստամբները՝ կրակապաշտական տաճարը և այլ շինություններ։ Դժվար չէ կռահել, որ հիշյալ պալատական շինությունը, ամենայն հավանականությամբ, ոչնչացվել է այդ շրջանում։

1973 թ. սյունազարդ դահլիճի հարավային մասում, երկրորդ խարիսխի մոտ, անմիջապես հատակի վրա բացվեցին թրծած աղյուսներով (23×23×4,5 սմ) շարված շինության պատերի մնացորդներ, որոնք, հավանաբար, արտադրական կառույցի են պատկանել։ Ուշագրավն այն էր, որ այդ պատերը VII դ. խճի տակ էին։ Հետևաբար, կարելի է ճշտել նրա ժամանակի մոտավոր սահմանները։ Անշուշտ, կառույցը հիմնվել է պալատի ավերումից՝ այսինքն VI դ. 60—70-ական թվականներից հետո և գոյատևել է մինչև VII դ. սկզբները։ Հավանաբար, այստեղ ժամանակավորապես հիմնվել է ապակեգործական արհեստանոց, քանի որ այդ շերտում, աղյուսաշար պատերից քիչ հյուսիս, գտնվել են մեծ քանակությամբ մուգ դարչնագույն, ապակե հարթ սալիկների և անոթների խոտանված բեկորներ, ինչպես նաև՝ օբսիդիանի տձև բեկորներ։ Այս առարկաների մի մասը հայտնաբերվել է ուժեղ կրակից այրված աղյուսների հետ մեկտեղ։ Նյութերի խիստ միօրինակության պատճառով դժվար է առայժմ որոշակի եզրակացություններ անել այդ արհեստանոցի արտադրանքի վերաբերյալ։ Հետաքրքրական է, որ նույն տեղում աղյուսե պատերի տակ գտնվեցին փայլուն մակերեսով, վերադիր բուսական զարդերով գորշ գույնի փոքր կարասի բեկորներ (աղ. III, 1, 3), որոնք իրենց

---

14 «Պատմութիւն Սեբէոսի եպիսկոպոսի ի Հերակլն», Թիֆլիս, 1913, էջ 40—41, Կիրակոս Գանձակեցի, Պատմություն հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի, Երևան, 1961, էջ 41։

կատարման ձևով խիստ մոտ են Դվինի կենտրոնական թաղամասից գտնված խաղողի որթատունկի զարդով կարասի բեկորին[15]։

Դվինի կենտրոնական թաղամասի 1971—1973 թթ. պեղումները կարևոր նյութեր տվեցին քաղաքի վաղմիջնադարյան նյութական մշակույթի ուսումնասիրության համար։ Շինարարական ձևերի և հնագիտական հարուստ նյութերի առկայությունը հնարավորություն են ընձեռում ստեղծելու շերտագրական մի պատկեր, որը խիստ անհրաժեշտ է առանձին դարաշրջանների մշակույթի առանձնահատկությունները վեր հանելու համար։ Բացվող պալատական շինությունը, հավանաբար, կաթողիկոսարանի նախնական շենքն է, որը կառուցվել է V դ. 70—80-ական թվականներին՝ կաթողիկոսական կենտրոնը Դվին տեղափոխելուց անմիջապես հետո։ Այդ շինությունը կործանվել է VI դ. 70-ական թվականներին։ Հետագայում, VII դ. սկզբներին, Մայր տաճարի հյուսիսային մասում կառուցվել է կաթողիկոսարանի նոր շենք։

РАСКОПКИ ЦЕНТРАЛЬНОГО КВАРТАЛА ДВИНА В 1971—1973 гг.

А. А. КАЛАНТАРЯН

Резюме

В 1971—1973 гг. раскопки проводились в основном к юго-западу от Кафедрального собора, где были обнаружены остатки монументального сооружения, построенного в конце V в.

В результате раскопок выявлены 1/3 центрального колонного зала с большими туфовыми базами и примыкающие к залу жилые помещения с южной и северной сторон. Эта постройка была разрушена вследствие большого пожара в 60—70-х гг. VI в., во время восстания Вардана (младшего) Мамиконяна.

По всей вероятности, данное сооружение является первым дворцом католикоса в Двине, построенным сразу после того, как Двин стал духовным центром Армении, и оно предшествовало дворцу, воздвигнутому Смбатом Багратуни в начале VII в.

На этом участке площадью в 500 кв. м, глубиной до 3-х м четко прослеживаются стратиграфические слои и напластования начиная с V в. до окончательного разрушения города (XIII в.). Эти слои датируются материальной культурой и явно разграничиваются по строительным остаткам. Особенно богато представлен IX в. с разнообразными материалами ремесленного производства.

---

15 Կ. Գ. Ղաֆադարյան, նշվ. աշխ., էջ 194, նկ. 173, Ա. Ա. Քալանթարյան, Դվինի նյութական մշակույթը IV—VIII դդ., Երևան, 1970, էջ 21։